ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Փրկչի Իշման Ս. Սեղանի առաջ աղոթք կկարդամ առ Աստված, որ «խաղաղության և ի մարդիկ հաճության» Ս. Ծննդյան երկնառաք օրհներգը իջնե առատապես երկրի վրա և առաջնորդ ու զորավիգ դառնա մեր օրերու մարդերուն և ժողովուրդներուն՝ ի փառս Աստուծո և ի փրկություն ազգի մարդկան:

Մեր Տիրոջ Ծննդյան և Աստվածահայտնության մեծ և սքանչելի ավետիսով թող բացվին դռները նոր տարի մը, որ հետը բերե բարի օրեր և խաղություն նաև հայ ժողովուրդին և Հայաստանյայց Եկեղեցիին, մեր հեռավոր և մերձավոր բոլոր հարազատ զավակներուն, պահելով պահպանելով զանոնք ամբողջ և անխոով և սիրով միաբան, մեր սուրբ հավատքի վեմին վրա անշարժ, առաքինի ու եկեղեցանվեր ու ազգաշեն գործոց փառավոր հաջողությամբ:

Ձեզ, ազգային-եկեղեցական վարչություններուն, հոգևոր դասուն, կրթական, մշակութային, երիտասարդական, հայրենակցական, բարեսիրական կազմակերպություններու ղեկավարներուն և համայն մեր սիրեցյալ հավատացյալ ժողովուրդին՝ ողջույն և օրհնություն հայրապետական և սրտաբուխ մաղթանք վասն Ձեր բոլորի բաջողջության, արեշատության և բարորության:

Ողջ մնացեք, անսասան մնացեք և բաջալերվեցեք Ս. Ծննդյան շնորհներովը զորացած, և գործեցեք սուրբ եռանդով գոտեպինդ, խաղաղ ու լավատես, Ձեր հայացքը սևեռած դեպի Ս. էջմիածին՝ աստվածակառույց հավատքի սյունը ամենայն հայոց:

Շնորհավոր նոր տարի և Ս. Ծնունդ, և սեր ու խաղաղություն Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ, ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կենտրոնական վարչության (Նյու-Յորք), Գայուսա Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգային (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. էջմիածնի տպարանի հանձնախմբին (Նյու-Յորք), Աբգարյան ավանդի և Ս. էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. էջմիածնի օժանդակ հանձնախմբին (Բեյրութ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի բարեբարներին և ազգային ծանոթ դեմքերին:

ՊԱ-1018

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳ. ԳԱՄԱՐՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ամանորի և Ս. Ծննդյան առիթով ընդունեցեք բոլորիս շնորհավորանքն ու սրտագին մաղթանքները Վեհիդ կենաց բաջառողջության, արեշատության, Մայր Աթոռս պայծառության, ժողովրդոց համերաշխության և աշխարհի խաղաղության համար:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ

ՍՏԱՄԲՈՒԼ

Հանեցեք ընդունիլ իմ և մեր միաբանության խոնարհ շնորհավորությունները նոր տարվան և Աստվածահայտնության առթիվ:

Թող մեր Տերը և Աստվածը՝ Հիսուս Քրիստոս զորացնե Զերդ Սրբությունը իր սուրբ գործին մեջ:

Խոնարհ հարգանքներով և սիրով՝
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Նոր տարվա և Ս. Ծննդյան առթիվ անկեղծ շնորհավորություններ:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ
ԿԻԼԻԿՅԱՆ ԱԹՈՌԻ ՏԵՂԱՊԱՀ

ԴԱՄԱՍԿՈՍ

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ամենաջերմ և հարգալիր զգացմունքներով գրված, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերից, թեմական առաջնորդներից, թեմական և եկեղեցական խորհուրդներից, հոգևոր հովիվներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: